«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՆԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀՅՈՒՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 4 հունվարի 2000 թ.:

Հունվարի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հյուրն էին «Հայաստանի նոր անուններ» բարեգործական կազմակերպության պատանի երաժիշտները, որոնք իրենց գեղեցիկ կատարումներով եկել էին շնորհավորելու Վեհափառ Հայրապետի Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Գևորգյան հոգևոր ճեմարանի դահլիճում Վեհափառ Հայրապետը մեծ սիրով ունկնդրեց արդեն իսկ միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիրներ դարձած երաժիշտներին, որոնցից շատերին ծանոթ էր դեռևս առաջնորդության տարիներից:

«Այսօր, երբ հոգևորը և մշակութայինը ինչ-որ չափով դուրս են մղված մեր կյանքից, նման պահերի պարգևումը առանձնահատուկ բերկրանք է ու մխիթարություն»,- իր Հայրապետական օրհնությունը հաղորդելով շնորհալի երաժիշտներին՝ ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով նրանց նոր դափնիներ ու նոր բարձունքներ:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև կազմակերպության նախագահ Սիլվա Մեքինյանին ու բոլոր մանկավարժներին, որոնք իրենց ազնիվ աշխատանքով մեծ բեմերի ճանապարհ են հարթում տաղանդավոր փոքրիկների համար:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հանրապետական գրադարան